

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով համակարգող խորհրդին անդամագրվելու համար տարածաշրջանի սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք մինչև ս/թ մարտի 15-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (գ.Ախուրյան, Գյումրի խճ. 42) ներկայացնեն մեկական ներկայացուցչի թեկնածություն:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են՝

- սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ.
- սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱԽՈՒՐՅԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ